ԽԱՉԱՏՈՒՐ ԱԲՈՎՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՀԱՅԿԱԿԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ
ԳԻՏԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

2021 թվականի մարտի 30-ի N 9-Լ

Լսելով Խաչատուր Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանի՝ Արցախյան երրորդ պատերազմում մասնակից ուսանողների և շրջանավարտների հիշատակի հավերժացման միջոցառումների մասին (զեկ.՝ Տիգրան Պետրոսյանց)՝

Գիտական խորհուրդը որոշում է.

1. Արցախյան երրորդ պատերազմում զոհված համալսարանականների հիշատակին տեղադրել հուշարձան:
2. Հուշարձանի տեղադրման գործընթացը կազմակերպելու համար ստեղծել մրցութային հանձնաժողով:
3. Հրատարակել Արցախյան երեք պատերազմների մասնակից 310 համալսարանականներին նվիրված կենսագրական հանրագիտարան:
4. Խրախուսել կուլտուրայի ֆակուլտետի ղեկավարության՝ 208-րդ արվեստանոցը ֆակուլտետի շրջանավարտ, ռեժիսոր, զոհված Ալեն Մարգարյանի անունով կոչելու որոշումը:
5. Շարունակել այցելությունները պատերազմում զոհված, մասնակից շրջանավարտների ընտանիքներին, հաշվառել նրանց կարիքները, ընդառաջել համալսարանում սովորող նրանց հարազատներին:
6. 2021-2022 ուս.տարում թույլ տալ անվճար ուսանել Արցախյան երրորդ պատերազմում զոհված համալսարանականների երեխաներին, կնոջը, քրոջը, եղբորը:

ԳԻՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀ՝

ՌՈՒԲԵՆ ՄԻՐԶԱԽԱՆՅԱՆ